

Եւ մինչդեռ նոր մարդկութիւններ կը նետուին
 Բաղդին կուղին մէջ՝ վերասլաց հետզհետեւ
 Յաղթող մտնէք պիտի ի՛փառս՝ քան զչափ անդր
 Զոր հողաբերն յոգնած ձեր սիրտ կ'երազէ :
 Եւ ինչպէս սերմն ինկած հողոյն մէջ՝ զոր ձիւն
 Կոծեց՝ թացին տարափք՝ արեւն ալ այրեց՝
 Հրաշագեղ ևս զարնան ծաղիկ կը բանայ՝
 Այսպէս բացուիք պիտի ի՛ղյս տիեզերս :

Թ. Թերզեան

ՄԵԾԱՆՈՒՆ ՎԱԽՃԱՆԵԱՔ 1892 ԱՄԻՆ

Թեպի՞գ փաշա . — Եգիպտոսի փոխարքան զա՛հ նստեցաւ 1879 յունիս 26ին
 և անցեալ սարի յունուար 7ին վախճանեցաւ . իւր որդին Ապպաս փաշա որ
 'ի վեհնա իւր եղբորը հետ Թերեզեան վարժարանին մէջ կ'ուսանէր՝ յա-
 ջորդեց իւր հօրը :

Երվակայն փերոն . — Երվային բարձրաստիճան սպայից մէջ ամենէն նշա-
 նաւորաց մին էր . ծնեալ 'ի Մարին (Սէն և Ուազ) 1823 յունիս 21ին .
 1839ին մտաւ ծովային դպրոցը . փրդիթուար ծովակային հրամանատարու-
 թեան ներքեւ իւր առաջին պատերազմական փորձերն ըրաւ և յետոյ արագ
 արագ բարձրացաւ պատուոյ ամէն աստիճաններէն : 1883ին ծովային նախա-
 րար անուանեցաւ՝ յոր և մնաց մինչև ց1885 : Երեւակոյտը արդէն վաղուց
 զինքն անդամակցեր էր :

Տը Գադրըֆաժ . — Այս նշանաւոր գիտնականը ծներ էր 'ի Պերդը-
 զաննէ (Կարտ) 1811ին : 1830ին 'ի Սղրազպուրկ միանգամայն թէ՛ բժշ-
 կութեան և թէ՛ գիտութեանց վկայագիրն ստացաւ . ինքզինքը նուիրեց բժշ-
 կական և բնական գիտութեանց . 1855 գիտութեանց ճեմարանը զինքն ան-
 դամ ընտրեց կենդանաբանութեան և մարդակազմութեան բաժնին մէջ . բը-
 նական պատմութեան բաժնին մէջ մարդաբանութեան ուսուցիչ էր :

Կումսն Նիռաքրէք . — Երած էր 'ի փարիզ 1811ին . Ստորին Նա-
 հանգաց ազնուական ընտանեաց մը շառաւիղն էր : 1849ին Հասարակապե-
 տութեան նախագահը՝ զինքն ազգային թանգարանաց ընդհանուր տեսուչ ա-
 նուանեց : Գրեթէ քսան տարի տմենայն լրջմտութեամբ և զոհութեամբ վա-
 րեց այս բարձր պաշտօնը :

Աղբերտ Վռթ. — Ֆիկարոյի այս հռչակաւոր ժամանակագիրն և արւեստագէտ քննադատը՝ ծնած էր 'ի Գոլոնիա, բայց մեծ պատերազմէն վերջը ազգութիւնը փոխեց և Գաղղիացի գրուեցաւ. նախ և առաջ Աղբերտանդր Տիւմայի ծերոյն գրագիրն էր, յետոյ զանազան թերթերու ալ աշխատակից եղաւ. և իւր կողմէն ալ հրատարակեց Փարիզեցոյ մը Յիշատակարանները:

Գլերեկնի դռքաւ. — Անցեալ տարւոյ ինֆլուէնցային արքունական զոհն եղաւ այս ղժբախտ և երիտասարդ իշխանն. Անգղիոյ թագաժառանգին անդրանիկն էր. 28 տարեկան էր, 1864ին ծնեւ էր. 1877ին մտեւ էր



Թեւթիգ Փաշա

'ի ծառայութիւն անգղիական նաւատորմին. երկու տարի վերջը շրջանաւարկութեամբ ճանապարհորդութիւն մ'ըրած էր աշխարհիս չորս կողմը իւր ուսումնական զարգացումը լրացնելու նպատակաւ: Սակայն անգղիական հասարակութեան հետ առաջին անգամ ծանօթացաւ երբ հրատարակուեցաւ իւր հարսնախօսութիւնն՝ ընդ իշխանուհին Մէյ-տը-թէք. սակայն մահուան մահն զաղը հնձեց և ջնջեց այս ամէն նորածիլ յոյսերը:

Տօն փետրօ. — Եւնած էր 1825ին. ղեռ հազիւ հինգ տարեկան էր երբ կոչուեցաւ 'ի գահ իւր նախորդաց: Իւր թագաւորութիւնը կէս դարէ աւելի տևեց (1831—1889). փարակուէի յաղթութենէն վերջը՝ իւր կայսերութիւնը

հարաւային Ամերիկայի տէրութեանց մէջ ամենէն աւելի զօրաւորն ըրաւ : Մէդրական դրութիւնն ընդունեցաւ և Ամազոնի նաւարկութիւնը առհասարակ ամէն ազգի նաւերու առջև բացաւ . գերութիւնը կը վերցնէր՝ երբ յանկարծական ապստամբութիւն մը՝ զինքը գերեց իւր Պետրոպոլսոյ պալատին մէջ : Ուսումնասէր և միանգամայն արուեստագէտ էր , և դրեթէ Եւրոպիոյ ամէն նշանաւոր գիտնականաց հետ թղթակցութիւն ունէր :

Ալֆան . — Գաղղիոյ մայրաքաղաքին վրայ ամենէն աւելի անխոնջ աշխատողաց մին էր . այս ալ նմանապէս զո՛ր գնաց ինֆլուէնցայի . ծնած էր



Երովակայն Փերոն.

’ի Կըրնուպլ 1817ին . իւր մահը ծանուցանող օրագրաց մին հետեւեալ կերպով կ’սկէր իւր յօդուածը . « մեռաւ այն՝ որ շնորհեց Փարիզու օդ , լոյս , շքեղութիւն և առողջութիւն » : Իւր վերջին մեծագործութիւնն եղաւ Փարիզու 89ին աշխարհահանդէսը :

Երովակայն Մոշէ . — Ծնած էր ’ի Մատրիտ 1821ին զաղղիական ընտանիքէ մը . իւր ուսմունքն ըրաւ ’ի Փարիզ Եւրոպիոյ դպրոցին մէջ . 1828ին անուանեցաւ տեսուչ Փարիզու դիտարանին :